ԾՐԱԳԻՐ

ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ

ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԵՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ

(ծրագրում ներկայացված է կինոարտադրության ոլորտի ներկա վիճակը,
առաջարկվում են բարեփոխման ու զարգացման լուծումներ
և առաջիկա երեք տարիների ֆիլմարտադրությանը նպաստող ծրագրեր)

Բովանդակություն

Նախաբան 3

1. Կինոժառանգության պահպանություն, վերականգնում և հանրահռչակում 5

1.1 Կինոժառանգության պահպանման խնդիրները 5

1.2 Կինոժառանգության հանրահռչակում 10

2. Կինոարտադրության և կինոարդյունաբերության խթանում 11

3. Ներգրավել արտասահմանյան արտադրողներին՝ Հայաստանում կինոարտադրություն իրականացնելու համար 15

4. Կինոկրթությանն աջակցող ծրագրերի մշակում 16

5. Միջազգային համագործակցություն 18

6. Կինոթատրոնների զարգացման և աջակցության ծրագիր 20

7. Վիճակագրական վերլուծությունների համար անհրաժեշտ տվյալների միասնական էլեկտրոնային շտեմարանի ստեղծում 24

8. Հիմնադրամի արտաբյուջետային ֆինանսավորումը 27

8.1 Հայաստանի Կինոյի հիմնադրամի այլընտրանքային ֆինանսավորման ուղիները 28

1. ԱՄՆ-ում գրասենյակի բացում և 501(c)(3) կարգավիճակի գրանցում 28

2. «Հայաստանի կինոյի դեսպաններ» 29

8.2 Եզրակացություն 29

Նախաբան

Հայկական կինեմատոգրաֆիան Հայաստանի նորագույն պատմության և մշակութային ժառանգության առանցքային բաժիններից է: Իր հարյուրամյա գոյության ընթացքում այն ենթարկվել է բազմաթիվ փոխակերպումների՝ գրանցելով վերելքի և անկման ժամանակաշրջաններ: Տեղին է նկատել, որ Խորհրդային կինոարվեստի զարգացման ընդհանուր համատեքստում հայկական կինոն ձևավորել է ստեղծագործական յուրօրինակ ազգային դիմագիծ: Ամենևին չհավակնելով այս ծրագրում շարադրել հայկական կինոարվեստի պատմությունը, այդուհանդերձ, անհնար է չնշել հայկական կինեմատոգրաֆի դերը համաշխարհային կինոյի պատմության մեջ: Այս տեսանկյունից բացառիկ ճանաչում և գեղարվեստական արժեք ունեն Համո Բեկնազարյանի, Սերգեյ Փարաջանովի, Ֆրունզե Դովլաթյանի, Արտավազդ Փելեշյանի, Բագրատ Հովհաննիսյանի և այլոց ֆիլմերը, որոնք կարևոր մշակութային կամուրջ են դարձել հայ և համաշխարհային կինոարվեստի միջև:

Չնայած Անկախության շրջանում ծագած բազում սոցիալ-տնտեսական և քաղաքական մարտահրավերներին, հայկական կինոն շարունակել է իր ստեղծագործական ուղին՝ պահպանելով ազգային ինքնությունն ու արտահայտչականության առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ, այս փուլում, ի թիվս այլ խնդիրների, առաջացել են նոր մարտահրավերներ, որոնք կապված էին ֆինանսավորման, ենթակառուցվածքների պահպանման և սահմանափակ շուկաների հետ:

Մի կողմ թողնելով ոլորտին առնչվող հարցերի պատմության մանրակրկիտ նկարագրությունն ու վերլուծությունը, կարծում ենք այսօր ավելի կարևոր է առկա վիճակի և խնդիրների ուսումնասիրությունն ու զարգացման հնարավորությունների պարզաբանումը:

Անշուշտ, երեք տարին բավարար չէ մեծ փոփոխությունների հասնելու համար, բայց հնարավոր է հիմնել զարգացման հեռանկարներ ապահովող առանցքային զարգացման ծրագրեր: Առաջիկա երեք տարիները պետք է դիտարկել որպես անցումային շրջան, որի ընթացքում կինոարտադրության

ոլորտում կձեռնարկվեն անհրաժեշտ բարեփոխումներ և կհիմնվեն, կհամալրվեն զարգացումն ապահովվող կառուցվածքներով և գործիքակազմով:

Չափազանց կարևոր է պահպանել ֆիլմարտադրության բնականոն պրոցեսը՝ չխաթարելով պետական ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերը: Անցումային շրջանի քայլերը պետք է ուղղված լինեն առկա համակարգի արդիականացման, նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ տվյալների շտեմարանի ստեղծման, ֆինանսական մեխանիզմների բարելավման և միջազգային համագործակցության ընդլայնման ծրագրերին: Անհրաժեշտ է անխափան շարունակել այն ծրագրերը, որոնք արդեն իսկ գործում են և ոլորտի զարգացման կարևոր տարրեր են:

Կինոարտադրությունը գործարարության ուրույն ոլորտ լինելուց բացի, հասարակության արժեքների, դաստիարակության, միջանձնային հարաբերությունների, լեզվամտածողության, գաղափարների քարոզչության չափազանց ազդեցիկ և կարևոր գործիք է, որը միայն խելամիտ օգտագործման պարագայում կարող է ծառայել հասարակության ու պետության շահերին, հակառակ դեպքում վնասներն անխուսափելի են: Խոսքը չի վերաբերվում գրաքննությանը, այլ հարկատուների միջոցները իրենց իսկ՝ հարկատուների, շահերին ծառայեցնելուն: Այս տեսանկյունից Հայաստանի կինոյի հիմնադրամը և իր լիազոր մարմինը՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, պետք է մշակեն չափորոշիչներ ազգային ֆիլմերի ֆինանսավորման համար: Հեղինակային, փորձարարական նախագծերը, որոնք այս չափորոշիչներից դուրս կլինեն, անշուշտ, աջակցության հնարավորություն պետք է ունենան, քանի որ կինոյի զարգացման հիմնական աշխատանոցներն են:

Միաժամանակ չափորոշիչները չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային կոնվենցիաներով ստանձնած պարտավորություններին: Ազգային ֆիլմի առաջնային սպառողը Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է լինի: Եթե հայ հանդիսատեսը սիրեց ֆիլմը, աշխարհի հանդիսատեսը վստահաբար կսիրի: Միթե մեզ համար կարևոր չէ, թե պարզ մարդկային այնպիսի արժեքները՝ սերը, ընտանիքը, ազնվությունը, կարեկցանքը, հոգատարությունը, շրջակա միջավայրի և բնության նկատմամբ խնամքը և այլն, որ երկրի ֆիլմերով են ներկայանում մեր հասարակությանը՝ ռուսակա՞ն, ամերիկյա՞ն, հնդկակա՞ն, եվրոպակա՞ն թե՞ հայկական: Վերջին ժամանակների հայկական կինորատադրությունը դիտարկելով կարելի է ենթադրել, որ այս արժեքները մեր հասարակության մեջ ներմուծվում են օտար ֆիլմերով: Հարց է առաջանում՝ հայկական ֆիլմերը բարեկեցության և համակեցության գաղափարների ինչպիսի մեկնաբանություններով են ներկայանում մեր հասարակությանը, դաստիրակում մեր երեխաներին:

Հայկական կինոարվեստը ոչ միայն մշակութային ժառանգության անբաժան մաս է, այլև՝ ազգային ինքնության կարևոր բաղադրիչ: Մեր կինոարվեստի ստեղծագործական ճանապարհը միշտ եղել է հայ ժողովրդի պատմության, մշակույթի և արժեքների արտացոլման հզոր միջոց, ինչը հնարավորություն է տվել աշխարհի տարբեր անկյուններում ճանաչելի դարձնել Հայաստանն ու հայկական ինքնությունը:

Բացի այդ, հարկ է ընդգծել, որ կինոարվեստը ոչ միայն մշակութային, այլև տնտեսական ներուժ ունի: Կինոարդյունաբերությունը, որպես ստեղծարար ոլորտ, կարող է նպաստել նոր աշխատատեղերի ստեղծմանը, միջազգային ներդրումների ներգրավմանը և զբոսաշրջության զարգացմանը: Այս տեսանկյունից կարևոր է ուսումնասիրել և մշակել ռազմավարական այնպիսի ծրագրեր, որոնք կինոարտադրությանը կհաղորդեն ներդրումային գրավչություն և կապահովեն տնտեսական արդյունքով:

Այս ծրագրի նպատակն է դիտարկել կինոարտադրության ոլորտը ոչ միայն որպես արվեստի և մշակույթի ձև, այլև որպես տնտեսական զարգացման և հասարակական համախմբման գործիք: Այն պետք է ծառայի որպես ուղենիշ՝ ապահովելով կինոարտադրության շարունակականությունը, ազգային ժառանգության պահպանությունը և միջազգային մակարդակում հայկական կինոյի ներկայացվածության ընդլայնումը:

1. Կինոժառանգության պահպանություն, վերականգնում և հանրահռչակում

1.1 Կինոժառանգության պահպանման խնդիրները

Հայկական կինոժառանգության հետազոտությունների ներկա փուլում անհրաժեշտ է անդրադառնալ կուտակված բազմաթիվ խնդիրներին, ձևավորել հեռանկարային քաղաքականություն, որը կնպաստի ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ այս բացառիկ նյութերի պահպանմանը և հանրահռչակմանը:

Արխիվային նյութերի պահպանման ներկա պայմանները չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին: Պահպանության ստանդարտներին համապատասխանող սարքավորումների և տեխնիկական միջոցների բացակայությունը վտանգի տակ են դնում ժառանգության պահպանությունը և բարդացնում նյութերի ուսումնասիրման և վերականգնման հնարավորությունները: Պահոցներում ստեղծված անմխիթար վիճակը, ստեղծել են սնկային հիվանդությունների համար բարենպաստ միջավայր:

Անհանգստացնող է Հայֆիլմ կինոստուդիայի պահոցներից և պահոցներում պահպանվող ժապավեններից վերցված կենսաքիմիական նմուշների

սնկաբանական հետազոտության արդյունքները, որ կատարվել է Մատենադարանի կենսաքիմիական լաբորատորիայում:

«Ընտրված նմուշների մակերեսին հայտնաբերվել են բորբոսասնկերի ակնհայտ գաղութներ (Նկ 1), որոնց տեսակային կազմը հետևյալն է (Նկ. 2)՝

1. Penicillium sp. (5 տարբեր տեսակներ) 100 -ից ավելի գաղութ

2. Cladosporium sp. - 100-ից ավելի գաղութ

3. Paecilomyces sp. – 2 գաղութ

4. Mortierella sp. - 1 գաղութ

Նկար 1.

Նկար 2.

Առաջարկություններ

Ստորև բերված առաջարկությունները միտված են բարելավելու տարածքների և ուսումնասիրվող նյութի սնկաբանական վիճակը՝ կանխելու համար տարածքում գտնվող և հետազոտվող նյութի հետ առնչվող մարդկանց մոտ ալերգիկ, բրոնխոթոքային, մաշկային և խորը միկոզային հիվանդությունների զարգացումը: Միկրոսկոպիկ սնկերով վարակված նյութը կարող է վարակի տարածման աղբյուր հանդիսանալ այն սարք - սարքավորումների համար որտեղ պետք է օգտագործվի այդ ախտահարված նյութը, ինչպես նաև կվարակի պահոցների առողջ միջավայրը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է անհապաղ առանձնացնել առողջ պահպանվող նյութը ախտահարվածից և առավել վնասված նմուշները ախտահանել հատուկ բիոցիդներով:

Պահոցային տարածքներում անհրաժեշտ է իրականացնել համակարգված թաց մաքրում: Առնվազն տարին մեկ անգամ անհրաժեշտ է իրականացնել դարակաշարերի, պահարանների և պահեստարանների փոշու հեռացում. հատակը, հիմքի տախտակները, պատուհանագոգերը, դարակների հիմքային մասերը մշակվի հակամանրէային լուծույթներով:

Աշխատակազմն էլ պետք է աշխատի ձեռնոցներով, դիմակներով/ռեսպիրատորներով:

Չի բացառվում վնասված նյութերի դուրս գրումը, հանձնաժողովի հատուկ որոշմամբ:

Արխիվային պահոցում փաստաթղթերի պահպանման պայմանները պետք է սահմանվեն ջերմաստիճանի և խոնավության հետևյալ օպտիմալ պարամետրերով, հաշվի առնելով պահպանվող նյութի տեսակային առանձնահատկությունները.

- մագնիսական սկավառակների և սկավառակակիրների փաստաթղթերի պահպանման համար՝ 8–18°C և 45–65% խոնավություն;
- օպտիկական սկավառակների վրա փաստաթղթերի պահպանման համար՝ 10–23°C և 20–50% խոնավություն;
- ֆիլմի վրա փաստաթղթերի պահպանման համար՝
- նիտրո հիմքով – սև և սպիտակը՝ 10 °C-ից ոչ բարձր ջերմաստիճան, գունավորը՝ -5 °C-ից ոչ բարձր ջերմաստիճան;
- անվտանգ հիմքով – սև և սպիտակը՝ 15 °C-ից ոչ բարձր ջերմաստիճան, գունավորը՝ -5 °C-ից ոչ բարձր ջերմաստիճան;
- լուսանկարչական փաստաթղթերի պահպանման համար՝
- սև և սպիտակ – 15°C-ից ոչ բարձր ջերմաստիճան;
- գունավորի համար -5°C-ից ոչ բարձր ջերմաստիճան:

Այսպիսով, բազմաթիվ ժապավեններ տարիների ընթացքում զգալիորեն քայքայվել են և ենթարկվել մեխանիկական վնասվածքների: Պահպանվող ելանյութերի ջերմակայունության և խոնավության պայմանների խախտումներից բացի մտահոգիչ են նաև պահոցների քիմիա-մանրէաբանական կենսամիջավայրերը, որոնք ըստ փորձաքննության արդյուքների հարուցում են մասնագետների առողջությանը սպառնացող անմիջական վտանգ: Ներկայումս հայկական կինոժառանգության պահպանման պետական ծրագիրը կենտրոնանում է հիմնականում թվայնացման և վերականգնման գործընթացների վրա, սակայն, ոլորտի այլ կարևոր բաղադրիչներից՝ ելանյութերի և թղթային արխիվների պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները բյուջետային ծրագրերում ընդգրկված չեն: Ֆինանսական արդյունավետության տեսանկյունից, նյութերի պատշաճ պահպանման բացակայությունը հանգեցնում է վերականգնման համար անհրաժեշտ ծախսերի զգալի աճին: Օրինակ՝ ժապավենի վնասված հատվածների վերականգնումը և թվայնացման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները երկարաժամկետ կտրվածքով հանգեցնելու են ընդհանուր ծախսերի կրկնապատկմանը:

Այս խնդիրների լուծման համար հիմնադրամը պետք է ունենա ոչ միայն պահպանման կանոնակարգ, այլև ֆինանսավորման այլ միջոցներ ներգրավվելու ռազմավարություն՝ համագործակցելով ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կառույցների հետ:

Հայկական կինոժառանգության արխիվային և տեսաձայնային հավաքածուն պահպանվում է երեք հիմնական հաստատություններում, որոնցից միայն երկուսն է Հայաստանում իսկ երրորդը՝ Ռուսաստանում:

ա. *Հայֆիլմ կինոստուդիայի տարածքում տեղակայված պահոց*

Այս պահոցում է գտնվում հայկական կինոյի ժառանգության զգալի մասը, այդ թվում՝ արխիվային բազմաբնույթ փաստաթղթեր, սցենարներ, կինոժապավեններ և այլ նյութեր: Հավաքածուն պետք է գույքագրել, արձանագրելով յուրաքանչյուր ժապավենի և արխիվային փաստաթղթերի վիճակը, և ստեղծել մանրամասն նկարագրություններով համակարգչային շտեմարան:

բ. *Հայաստանի պետական արխիվի ֆոտո-ֆոնո մասնաճյուղ*

Պետական արխիվում պահպանվում են ոչ միայն ֆիլմեր, այլև կինոժառանգության հետ կապված լուսանկարներ, ձայնագրություններ և այլ նյութեր: Հավաքածուն գույքագրված է, բայց անհրաժեշտ է արդիականացնել,

արձանագրելով յուրաքանչյուր ժապավենների և արխիվային փաստաթղթերի վիճակը, և ստեղծել մանրամասն նկարագրություններով համակարգչային շտեմարան:

գ. *Ռուսական պետական կինոարխիվ*

Ռուսական պետական կինոարխիվում պահվում են բազմաթիվ հայկական ֆիլմերի ելանյութեր, որոնք առանձնահատուկ նշանակություն ունեն կինոժառանգության թվայնացման և վերականգնման համար: Այս արխիվը ապահովում է նյութերի պատշաճ պահպանություն: Ինչը, թույլ է տալիս ֆիլմերը թվայնացնել բարձր որակով և ունենալ թվային պատճեններ: Պետք է նկատի ունենալ, որ Ռուսական պետական կինոարխիվում պահվող նյութերը մեծ մասամբ ռուսերեն լեզվով են, և հայերեն օրինակի ստեղծման համար հաճախ անհրաժեշտ են լինելու կրկնակի թվայնացման աշխատանքներ, հայերեն օրինակները բարձր որակով ունենալու համար:

Հայկական ֆիլմարտադրության նմուշներ կան նաև տարբեր երկրների արխիվներում, որոնց թվայնացված օրինակների ձեռքբերումը պետք է լինի Կինոյի հիմնադրամի կարևոր աշխատանքներից մեկը:

Այսպիսով, ժառանգության պահպանության ոլորտում Հիմնադրամի նպատակներն են՝

ա. *Ստեղծել արխիվային նյութերի պահպանության կանոնակարգեր,*

բ. *Ապահովել պահոցների տեխնիկական վերազինման գործընթացը,*

գ. *Կազմակերպել մասնագետների վերապատրաստման ծրագրեր,*

դ. *Ավելացնել թվայնացման ծավալները, կանխել եզակի մշակութային արժեքների հետագա կորուստը,*

ե. *Խրախուսել մասնագիտական հետազոտությունները, գիտական ծրագրերն ու փորձի փոխանակումը,*

զ. *Ստեղծել հատուկ արխիվային կենտրոն և համապատասխան լաբորատորիա՝ կինոժառանգության պահպանման, թվայնացման և ուսումնասիրության համար:*

Պետք է նկատի ունենալ, որ ժառանգության պահպանման և վերականգնման ծրագրերը տասնամյակների գործ են լինելու, և առաջիկա երեք տարիներում այս ուղղությունների հիմնադրումը այնքան ամուր, մտածված և մասնագիտական բարձր որակի վրա պետք է ստեղծել, որ հաջորդ տարիների ընթացքում ժառանգության պահպանության գործը չդադարի և շարունակական լինի: Այսինքն՝ այս ընթացքում կրթված մասնագետները շահագրգռված լինեն

մնալ ոլորտում, իսկ սկիզբ առած ծրագերը չդադարեն: Վերը թվարկված միջոցառումներն ապագայում թույլ կտան նվազեցնել կինոժառանգության պահպանությանն առնչվող ռիսկերը և ապահովել մշակութային արժեքների ուսումնասիրման և հանրահռչակման բնականոն ընթացքը:

1.2 Կինոժառանգության հանրահռչակում

Հանրահռչակման նպատակն է հնարավորություն ստեղծել և շահագրգռել մշակութաբաններին, կինոարվեստի մասնագետներին, իրենց հետազոտություններով հանրահռչակել հայկական կինոն, քարոզելով հայկական կինոարվեստը՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Ուշագրավ են այս ոլորտում համեմատաբար վերջին շրջանի ձեռքբերումները, որոնք էապես նպաստել են հայկական կինոյի վերադիրքավորմանը Եվրոպական հարթակներում. Այսպիսով՝ 2022 թվականին Կաննի Կինոփառատոնի «Cannes Classics» հարթակում ներկայացվեց Ֆրունզե Դովլաթյանի «Բարև, ես եմ» (1966) ֆիլմը՝ որպես հայկական կինոյի դասական օրինակ: «Բարև, ես եմ»-ի ընդգրկումը «Cannes Classics» ծրագրում նոր հնարավորություններ ստեղծեց հայկական կինոժառանգության միջազգային ճանաչման համար: Այն դարձավ Կաննի կինոշուկայի «Marché du Film» հայկական տաղավարի այցեքարտը:

Այսպիսով՝ ժառանգության հանրահռչակման բնագավառում հիմնադրամի նպատակներն են.

ա. *Առցանց հասանելիություն*

Ստեղծել առցանց հարթակ, որտեղ այցելուները կարող են դիտել թվայնացված ֆիլմեր, լուսանկարներ, ծանոթանալ ֆիլմերի ստեղծման պատմությանը, սցենարական աշխատանքներին և ստանալ ստեղծագործական խմբերի մասին հակիրճ տեղեկատվություն:

բ. *Միջազգային կինոփառատոններում մասնակցություն*

Ազգային կինոժառանգության ընտրանին ցուցադրել միջազգային կինոփառատոներում՝ հատուկ ծրագրերի ձևաչափով: Համագործակցել միջազգային մշակութային հաստատությունների և արխիվային կենտրոնների հետ՝ կազմակերպելով հայկական ֆիլմերի օրեր կամ շաբաթներ:

գ. *Կրթական ծրագրերի և աշխատաժողովների կազմակերպում*

Կազմակերպել կինոժառանգությանը նվիրված վարպետության դասեր, սեմինարներ և աշխատաժողովներ՝ ներգրավելով մասնագետների, ուսանողների և կինոյի սիրահարների: Նախաձեռնել կրթական ծրագրեր, որոնք

կընդգծեն հայ կինոյի գեղարվեստական և պատմական կարևորությունը երիտասարդ սերնդի համար:

դ. *Թանգարանային ցուցադրություններ*

Կազմակերպել ժամանակավոր ցուցահանդեսներ, որոնք կներկայացնեն կինոժառանգությանն առնչվող գեղարվեստական հավաքածուներ, բեմական իրեր, հանդերձանք և դեկորներ, արխիվային և տեսաձայնային նյութեր: Համագործակցել թանգարանների և մշակութային կենտրոնների հետ կինոյին նվիրված ցուցադրություններ կազմակերպելու համար:

ե. *Հասարակության ներգրավում*

Ապահովել հանրային մասնակցություն՝ կինոժառանգությանը նվիրված ֆորումների, քննարկումների և կինոդիտումների միջոցով: Մշակել և իրականացնել սոցիալական մեդիա արշավներ, որոնք կնպաստեն կինոժառանգության նկատմամբ հետաքրքրությանը:

զ. *Հայկական կինոժառանգության մասին առցանց և տպագիր նյութերի հրապարակումներ*

Տպագրել և տարածել հայ կինոյի պատմության մասին գրքեր, ուսումնասիրություններ և հոդվածներ: Հրապարակել կինոժառանգության վերաբերյալ միջազգային գիտաժողովների նյութեր՝ ընդգծելով հայկական կինոյի դերն ու ազդեցությունը: Խթանել հայ և համաշխարհային լուսանկարչության, կինոյի պատմությանն առնչվող ուսումնասիրությունների հրապարակմանը:

է. *Միջազգային գործընկերության զարգացում*

Համագործակցել միջազգային կինոարխիվների և մասնագիտացված մյուս հաստատությունների հետ՝ հայկական կինոժառանգությունը համաշխարհային կինոգիտության մաս դարձնելու նպատակով: Կազմակերպել համատեղ նախագծեր՝ կինոժառանգության թվայնացման և վերականգնման ոլորտում:

2. Կինոարտադրության և կինոարդյունաբերության խթանում

Կինոարտադրություն և *կինոարդյունաբերություն* տերմինները հաճախ շփոթվում են, սակայն դրանք ունեն տարբեր նշանակություններ: Կինոարտադրությունը վերաբերում է կինոնկարների ստեղծման գործընթացին՝ սկսած գաղափարների մշակումից մինչև ֆիլմի վերջնական տարբերակը: Այն ընդգրկում է ստեղծագործական և տեխնիկական աշխատանքների ամբողջությունը:

Կինոարդյունաբերությունը լայն հասկացություն է, որը ներառում է ոչ միայն կինոարտադրությունը, այլև կինոյի առևտրային կողմերը: Այն կապում է արվեստը բիզնեսի հետ՝ ընդգրկելով կինոյի ստեղծման, տարածման և մարքեթինգի գործընթացները:

Հայաստանի *կինոարտադրության* ոլորտը, լինելով ազգային մշակութային ժառանգության կարևոր բաղադրիչ, ունի զգալի ներուժ՝ ինչպես գեղարվեստական, այնպես էլ տնտեսական զարգացման տեսանկյունից: Սակայն ոլորտը ներկայումս բախվում է մի շարք մարտահրավերների, որոնք պահանջում են համակարգային լուծումներ: Հայաստանի կինոյի հիմնադրամը պետք է ձևավորի ռազմավարական ուղեցույց, որն ուղղված կլինի կինոարտադրության կայուն զարգացմանը և միջազգային հարթակներում մրցունակության բարձրացմանը:

Ներկայումս Հայաստանի կինոարտադրության հիմնական ֆինանսական աղբյուրը պետական ֆինանսավորումն է, որն ապահովում է ֆիլմերի արտադրության համար անհրաժեշտ ռեսուրսների զգալի մասը: Չնայած պետական աջակցության կարևորությանը, այն հաճախ լրացվում է մասնավոր ներդրումներով, որոնք դեռևս շատ սահմանափակ են և հազվադեպ:

Հայաստանի կինոյի հիմնադրամը, ըստ էության, ֆինանսավորում է միայն այն ֆիլմերը, որոնց բյուջեի մի մասը արդեն ապահովված է ֆիլմարտադրողների կողմից: Այս պահանջը խրախուսում է համաֆինանսավորման մոդելը, որի շրջանակներում ֆիլմարտադրողները ստիպված են գտնել լրացուցիչ միջոցներ՝ միջազգային դոնոր կազմակերպություններից կամ համարտադրության պայմանագրեր կնքելով իրենց միջազգային գործընկերների հետ: Այս գործընթացը ոչ միայն նպաստում է ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը, այլև մեծացնում է ֆիլմերի տարածման և միջազգային հարթակներում ճանաչվելու հնարավորությունները:

Հայաստանը 2016 թվականից հանդիսանում է Եվրիմաժի անդամ, ինչը զգալիորեն բարձրացնում է ֆիլմարտադրողների հնարավորությունները միջազգային ֆինանսավորման աղբյուրներ ներգրավելու համար: Եվրիմաժը, լինելով Եվրոպական համաֆինանսավորման հիմնադրամ, աջակցում է համատեղ արտադրություններին՝ կարևորելով մշակութային և գեղարվեստական արժեքները: Սա հնարավորություն է տալիս հայկական ֆիլմերին ընդգրկվել միջազգային կինոշուկաներում, ինչպես նաև մասնակցել հեղինակավոր փառատոներին: Ավելին, Եվրիմաժի կողմից ֆինանսավորվող նախագծերը հաճախ ընկալվում են որպես բարձրորակ և մրցունակ աշխատանքներ, ինչը էապես նպաստում է ֆիլմի հաջողությանը շուկայում:

Ամփոփելով, նշենք որ Հայաստանի կինոարտադրության ֆինանսական մոդելը հիմնված է՝ ա) պետական աջակցության և բ) միջազգային համագործակցության վրա:

Միջազգային դոնոր կազմակերպությունների ներգրավումը և Եվրիմաժի հետ համագործակցությունը ստեղծում է կայուն հիմք՝ հայկական կինոյի զարգացման և դրա միջազգային ճանաչման համար, սակայն սա միայն լավ մեկնարկային հնարավորություն է:

Հայկական կինեմատոգրաֆիայի զարգացումը պետք է դիտարկել երկու հիմնական ուղղություններով՝

ա) կինոարտադրության զարգացում,

բ) կինոարդյունաբերության զարգացում:

ա) Հայկական կինոարտադրության առաջնային նպատակը պետք է լինի մրցունակ ֆիլմերի ստեղծումը, որոնք միաժամանակ կարտացոլեն ազգային մշակույթի արժեքներ և կգրավեն միջազգային լսարանի ուշադրությունը:

Ֆինանսավորման տրամաբանությունը պետք է հիմնված լինի որակի գերակայության սկզբունքի վրա՝ աջակցելով այն նախագծերին, որոնք ունեն գեղարվեստական, տեխնիկական և կոմերցիոն հաջողության մեծ հեռանկար: Սակայն այս կետի ապահովման համար անհրաժեշտ է ստեղծել հստակ չափորոշիչներ, որով կառաջնորդվի ֆիլմեր ընտրող հանձնաժողովը:

Քանի որ Խաղարկային ֆիլմերը հիմնական ժանր են և հասցեագրված են ավելի լայն լսարանի, ապա նրանց ֆինանսավորումը պետք է լինի առաջնային: Վավերագրական ֆիլմերն անհրաժեշտ են պատմական, սոցիալական և մշակութային հարցերի լուսաբանման համար՝ համատեղելով իրականության արտացոլման բարձր գեղարվեստականություն և հավաստիություն: Անիմացիոն ֆիլմերը, հատկապես՝ կարճամետրաժ ձևաչափով, կարող են նպաստել երիտասարդ ստեղծագործողների զարգացմանը և ազգային անիմացիոն ժառանգության վերածնմանը:

Ֆիլմերի ընտրության կարգը հաստատվում է պետական լիազոր մարմնի կողմից, սակայն Հիմնադրամը պետք է մշակի և կիրառի փորձագետների շտեմարանի համալրման ռազմավարություն: Այս գործընթացը ներառում է փորձագետների ընտրության հստակ մեխանիզմների և չափորոշիչների կիրառում, ինչպես նաև շտեմարանի համալրման համակարգված մոտեցում:

Հիմնադրամը պետք է նախատեսի ռազմավարության մշակման և իրագործման համար անհրաժեշտ ժամանակացույց, որը կներառի.

ա. *Փորձագետների հավաքագրման փուլերը:*

բ. *Ընտրության գործընթացի կազմակերպումը:*

գ. *Շտեմարանի պարբերական թարմացման ընթացակարգերը:*

դ. *Կենտրոնանալ դեբյուտային և հեղինակային ֆիլմերի միջազգային համատեղ արտադրությունների վրա՝ ապահովելով միջազգային ճանաչում և ցուցադրության աճ:*

Դեբյուտային ֆիլմերը հնարավորություն են տալիս բացահայտել նոր տաղանդներ և վերականգնել ազգային կինոյի ստեղծագործական ներուժը: Հեղինակային ֆիլմերը ավելի շատ միտված են կինոարտադրության մեջ նորարարական մեթոդների և ստեղծագործական ոճերի բացահայտմանը:

Պետական ֆինանսավորումը պետք է ուղղված լինի երիտասարդ ռեժիսորների խրախուսմանը՝ ապահովելով անհրաժեշտ ռեսուրսներ առաջին նախագծերի համար: Ավելորդ չէ մեկ անգամ ևս նշել որ, միջազգային համատեղ արտադրությունները, իրենց հերթին, հանդիսանում են հայկական կինոյի զարգացման կարևոր ուղիներից մեկը, քանի որ թույլ են տալիս ներգրավել միջազգային գործընկերների ֆինանսական և տեխնիկական աջակցությունը, ինչպես նաև ապահովել հայկական ֆիլմերի տարածումը համաշխարհային կինոշուկայում: Համարտադրողների հետ աշխատանքը կնպաստի նաև Հայաստանում նորարարական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը, ինչը հնարավորություն կտա բարելավել տեղական ընկերությունների կարողությունները:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ազգային ֆիլմերի տարածման համար կարևորագույն նախապայմաններից մեկը կինոթատրոնների առկայությունն է, որը, ցավոք, Հայաստանում անբավարար է: Այսօր հայ կինոարտադրողը և հանդիսատեսը զրկված են իրար հանդիպելու հարթակից, այն է կինոթատրոններից:

Կինոթատրոնների սակավ քանակը և մայրաքաղաքում կենտրոնացված լինելը խնդիր է, որ պահանջում է առանձին անդրադարձ՝ թե՛ որպես կինոարտադրության կայուն զարգացման, և թե՛ որպես ազգային մշակույթը հանրության լայն շերտերին հասցնելու առանցքային գործոն: Առանց ներքին կինոշուկայի ձևավորման և կինոթատրոնների հասանելիության բարձրացման՝ անգամ ամենաբարձրորակ նախագծերը կանգնած են հանդիսատեսից հեռու մնալու վտանգի առջև: Միաժամանակ հանդիսատես և կինոարտադրող հետադարձ կապի վերականգնումը թույլ կտա բացահայտել հանդիսատեսի՝ ասել է թե շուկայի, վերաբերմունքը ստեղծագործության նկատմամբ:

Ուստի, այս խնդիրները պետք է դառնան առաջիկա առանցքային կետերից ազգային կինոյի կենսունակությունը և շարունակականությունը ապահովելու համար:

Բ) Ինչպես նշել ենք արդեն, Հայաստանում կինոարդյունաբերության կայուն զարգացման համար անհրաժեշտ են կանոնավորված և թափանցիկ, վստահություն վայելող աշխատանքային միջավայրի ստեղծմանը նպաստող նախաձեռնություններ, որոնք կբարելավեն արտադրական ենթակառուցվածքներն ու նրանց փոխհարաբերությունները, կխթանեն տեղական կինոարտադրության աճը և կնպաստեն ազգային կինոյի ճանաչմանը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակում: Իհարկե, այս նախաձեռնությունները պետք է բխեն ՀՀ «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքից:

3. Ներգրավել արտասահմանյան արտադրողներին՝ Հայաստանում կինոարտադրություն իրականացնելու համար

Հայաստանը, ունենալով բազմազան և յուրահատուկ բնապատկերներ, պատմական և մշակութային հարուստ ժառանգություն, կարող է դառնալ նպատակահարմար վայր կինոարտադրություն իրականացնելու համար: ՀՀ «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքով սահմանված ներդրումների մասնակի վերադարձի մեխանիզմը (cash rebate) կարևոր գործիք է՝ միջազգային կինոարտադրողների հոսքը դեպի Հայաստան խթանելու համար: Այս մեխանիզմը հնարավորություն է տալիս արտասահմանյան արտադրողներին Հայաստանում իրենց կողմից արտադրվող ֆիլմերի վրա ծախսած գումարների որոշակի մասի փոխհատուցում: Նվազեցնելով միջազգային արտադրողների ֆինանսական բեռը, Հայաստանը կդառնա գրավիչ երկիր օտարերկրյա ֆիլմարտադրողների ներդրումների համար: Սա իր հերթին, մուլտիպլիկատիվ ազդեցություն կունենա ՀՀ տնտեսության այլ ոլորտներում:

Ըստ այդմ անհրաժեշտ է ստեղծել *«Ֆիլմահանձնակատարի գրասենյակ»* (Film Commission), որը կհամակարգի արտասահմանյան արտադրողների հետ աշխատանքը և կապահովի ամբողջական աջակցություն կինոարտադրության կազմակերպման գործընթացում: Սա նաև լավ հնարավորություն կստեղծի միջազգային հանրությանը ֆիլմերի միջոցով ներկայացնել Հայաստանը:

Այսօր ֆիլմահանձնակատարի գրասենյակներ գործում են բոլոր զարգացած երկրներում: Դրանք շահույթ չհետապնդող կազմակերպություններ են, որոնց նպատակն է ներգրավել կինոգործիչներին՝ նկարահանումներ իրականացնելու տեղի հատուկ տարածքներում (դիցուք՝ Հայաստանի Հանրապետության): ՀՀ-ն տարածաշրջանում և ընդհանրապես աշխարհում եզակի երկրներից է, որն այս

մեխանիզմներից չի օգտվում, ինչը էական բացթողում է ֆիլմարտադրության զարգացման համար:

Աշխարհի ավելի քան 100 երկրներում գործում են ավելի քան 1000 ֆիլմհանձնակատարի գրասենյակներ, որոնց մեծ մասը գործում է ԱՄՆ-ում, Եվրոպայում և Ասիայում: Միջազգային ասոցիացիայի անդամ կինոհանձնաժողովները չեն կարող լինել մասնավոր կամ շահույթ հետապնդող կազմակերպություններ: Այդ իսկ պատճառով հարկ է նշել, որ ֆիլմհանձնակատարի գրասենյակը պետք է ներդրվի հենց պետության կողմից:

Ֆիլմհանձնակատարը հանդես է գալիս որպես համակարգող միջնորդ, որը շահագրգռված է տարածաշրջանում իրական ֆինանսական ներդրումներ ներգրավելու հայկական և արտասահմանյան կինոարտադրող ընկերությունների միջոցով, նպաստում է տեղական վարչակազմի և կինոգործիչների (տեսաձայնային արտադրանք ստեղծող կազմա-կերպությունների) արդյունավետ փոխգործակցությանը: Այն իր բնույթով նման է «Մեկ պատուհան» մոդելին, ինչի միջոցով հնարավոր կլինի Հայաստանում ստեղծել ֆիլմարտադրության համար գրավիչ ստեղծագործական դաշտ:

Միջազգային համագործակցության տեսանկյունից կարևոր է, որ ֆիլմհանձնակատարի գրասենյակը անդամակցի այնպիսի կառույցների հետ ինչպիսիք են՝ AFCI (Association of Film Commissioners International)-ին՝ փորձի փոխանակման և համաշխարհային ցանցերում Հայաստանի գրավչությունը բարձրացնելու համար: Ինչպես նաև պետք է անդամակցի European Film Commissions Network (EUFCN)-ին՝ եվրոպական կինոարտադրության համայնքի հետ կապ հաստատելու և տարածաշրջանային գործընկերներ գտնելու նպատակով: Արդեն իսկ Հայաստանի կինոյի հիմնադրամը սերտ համագործակցության մեջ է վերոհիշյալ կառույցների հետ և առաջիկայում նախատեսված են մի շարք հանդիպումներ այդ համագործակցությունը գործնական հիմքերի վրա դնելու համար:

4. Կինոկրթությանն աջակցող ծրագրերի մշակում

Հայաստանում կինոկրթությամբ զբաղվում են մի շարք հաստատություններ, որոնք առաջարկում են տարբեր մակարդակի ծրագրեր՝ սկսած միջին մասնագիտական կրթությունից մինչև բուհական և ոչ ֆորմալ կրթություն:

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը (ԵԹԿՊԻ) կինոարվեստի և թատրոնի ոլորտում մասնագետների պատրաստման հիմնական հաստատությունն է: Այն առաջարկում է բակալավրիատ և մագիստրատուրա հետևյալ ուղղություններով՝ օպերատորություն, սցենարական գործ, դերասանական արվեստ, արվեստի կառավարում,

հնչյունային, խաղարկային, վավերագրական, հեռուստատեսային, անիմացիոն ռեժիսուրա: Ինստիտուտը կարևոր դեր ունի ոլորտի բարձրակարգ մասնագետների ձևավորման գործում: Միջազգային կինոկրթության դիտարկումները, սակայն, ցույց են տալիս, որ ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է մասնագիտությունների ավելի ընդարձակ դասակարգում՝ դրանք բաժանելով երկու հիմնական բաժինների՝ ստեղծագործական հիմնական մասնագիտություններ և օժանդակ մասնագիտություններ: Այս բաժանումը թույլ է տալիս պատրաստել մասնագետներ, որոնք կլրացնեն ոլորտի պահանջները և կապահովեն կինոարտադրության ամբողջական գործընթացի արդյունա-վետությունը:

Ստեղծագործական հիմնական մասնագիտություններն ուղղակիորեն կապ ունեն ֆիլմի ստեղծման գաղափարական և գեղարվեստական մտահղացման հետ: Դրանք են՝ ռեժիսոր, սցենարիստ, օպերատոր, գեղարվեստական տնօրեն (Art Director), դերասան, պրոդյուսեր, կոմպոզիտոր, ձայնային ռեժիսոր և այլն: Նրանք են կրում հիմնական պատասխանատվությունը ֆիլմի գեղարվեստական բովանդակության և որակի համար:

Օժանդակ մասնագիտությունները ապահովում են ֆիլմարտադրության տեխնիկական և կազմակերպչական գործընթացները: Դրանք են լուսավորող մասնագետները (Gaffer), ձայնային օպերատորները, երկրորդ ռեժիսորները, հանդերձանքի ձևավորողները, մոնտաժողները, ռեկվիզիտ և դեկոր պատրաստողները, դիմահարդարողներ և այլն: Այս մասնագետները կարևոր դեր են խաղում կինոարտադրության գործընթացում՝ իրենց մասնագիտական հմտություններով աջակցելով ստեղծագործական թիմին:

Ոլորտի մասնագետները հաճախ փաստում են, որ Հայաստանում այսօր հնարավոր է միաժամանակ նկարահանել առավելագույնը երեք ֆիլմ: Սա պայմանավորված չէ միայն տեխնիկական միջոցների սահմանափակությամբ, այլ ավելի շատ՝ կինոարտադրության ոլորտում որակյալ մասնագետների պակասով: Այս իրավիճակը բացատրվում է օժանդակ մասնագիտությունների թվի կրճատմամբ: Նոր մասնագետների պատրաստման և վերապատրաստման արդյունավետ ծրագրերի բացակայությունը ստեղծում է իրավիճակ, որտեղ որակյալ աշխատուժի պակասը դառնում է կինոարտադրության զարգացման հիմնական խոչընդոտներից մեկը:

Կինոկրթության համակարգի բարելավումն ու մասնագիտական ներուժի աճը պետք է դառնա հիմնադրամի համար առաջնահերթություն: Ոլորտի այս ձևաչափի հաջողությունը կտա միաժամանակ ավելի մեծ քանակով ֆիլմեր նկարահանելու հնարավորություն և կապահովի ստեղծագործական և վարպետության որակի աճ:

Կինոարվեստի զարգացման հիմքում պետք է դիտարկել երիտասարդ մասնագետների կրթությունն ու մասնագիտական վերապատրաստումը, որը թույլ կտա ձևավորել ստեղծագործական և մասնագիտական որակյալ կադրեր և կհամապատասխանեն ժամանակակից կինոարտադրության պահանջներին:

Հայաստանում կինոկրթության համակարգի կատարելագործման համար հիմնադրամը պետք է ստեղծի կրթաթոշակային ֆոնդ, որը հնարավորություն կտա շնորհալի ուսանողներին սովորել առաջատար կինոդպրոցներում: Կրթաթոշակները պետք է ներառեն սցենարիստների, ռեժիսորների, օպերատորների, մոնտաժողների և այլ մասնագետների ուսուցում՝ առաջնահերթություն տալով երիտասարդ ստեղծագործողներին: Նմանատիպ ծրագրերը կխրախուսեն ազգային կինոյի երիտասարդ տաղանդների խրախուսմանը և կնպաստեն միջազգային ճանաչման ձեռքբերմանը: Ֆինանսական աջակցություն կտրամադրվի ուսման վարձի փոխհատուցման, արտերկրյա կինոդպրոցներում ուսանելու ճանապարհածախսերի համար: Հիմնադրամը համագործակցության հնարավորություններ կստեղծի նաև աշխարհի առաջատար կինոդպրոցների և ակադեմիաների հետ, ինչը թույլ կտա էականորեն բարելավել կրթական ծրագրերը և տեղայնացնել նորարարական մոտեցումները: Այս ծրագրերը կնպաստեն Հայաստանում կինոկրթության համակարգված զարգացմանը, թույլ կտան երիտասարդ և սկսնակ մասնագետներին ծանոթանալ միջազգային ստանդարտներին:

Այս քայլերը կնպաստեն կինոկրթության հիմնարար զարգացմանը Հայաստանում, կստեղծեն ժամանակակից կինոգործիչների նոր սերունդ և կապահովեն ազգային կինոարտադրության շարունակական առաջընթացը:

5. Միջազգային համագործակցություն

Միջազգային համագործակցությունը կարևոր բաղադրիչ է հայկական կինոարտադրության զարգացման համար, քանի որ այն ստեղծում է նոր հնարավորություններ ոչ միայն ֆինանսական աջակցության ներգրավման, այլև տեխնիկական և ստեղծագործական փորձի փոխանակման ուղղությամբ: Հայկական կինոն միջազգային մակարդակում դիրքավորելու համար անհրաժեշտ է ամրապնդել և ընդլայնել համագործակցությունը այնպիսի միջազգային կազմակերպությունների հետ, որոնք կարևոր դեր են խաղում Ազգային կինոարտադրության ոլորտում:

Ինչպես արդեն նշել ենք 2016 թվականից Հայաստանը «Եվրիմաժ»-ի անդամ է, ինչը մեծ հնարավորություն է ստեղծել հայկական ֆիլմերի միջազգային համատեղ արտադրության համար: «Եվրիմաժ»-ի հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս ներգրավել

համաֆինանսավորում, ինչը թեթևացնում է հայկական նախագծերի ֆինանսական բեռը և ապահովում նրանց միջազգային դաշտում մրցունակությունը:

«Եվրոպական աուդիովիզուալ Օբսերվատորիայի» հետ համագործակցությունը կօգնի հավաքագրել և վերլուծել կինոյի ոլորտի արդի տվյալները՝ ռազմավարական որոշումներ կայացնելու համար:

Համագործակցությունը պետք է ընդլայնվի նաև «Ֆիլմարխիվների միջազգային ֆեդերացիայի» (FIAF) հետ: Վերջինս հնարավորություն կընձեռի հայկական կինոժառանգության պահպանման, թվայնացման և վերականգնման ծրագրերի զարգացմանը, ինչպես նաև միջազգային արխիվային ցանցերին միանալուն:

Հայկական կինոյի ցուցադրություններ միջազգային փառատոներում

Միջազգային կինոշուկաներում հայկական ֆիլմերի մասնակցությունը հնարավորություն է տալիս վերահիմաստավորել ազգային ժառանգությունը՝ այն համադրելով ժամանակակից գլոբալ մշակութային ուղղությունների հետ: Հեղինակավոր կինոփառատոներում, ինչպիսիք են Կաննի, Բեռլինի և Վենետիկի փառատոները, հայկական ֆիլմերի ցուցադրությունը ոչ միայն մեծացնում է ֆիլմերի ստեղծագործողների ճանաչելիությունը, այլև հնարավորություն տալիս ձևավորել նոր կապեր միջազգային գործընկերների հետ, որոնք կարող են նպաստել կինոարդյունաբերության զարգացմանը:

Բացի այդ, հայկական ֆիլմերի միջազգային մասնակցությունն ունի կարևոր դիվանագիտական նշանակություն: Ֆիլմերը կարող են դառնալ մշակութային երկխոսության հարթակ՝ ստեղծելով բարեկամական հարաբերություններ տարբեր ազգերի և մշակույթների միջև: Սա խթանում է Հայաստանի դրական համբավի ձևավորմանն ու ամրապնդմանը, ինչը կարող է ազդել նաև երկրի զբոսաշրջության, ներդրումների ներգրավման և մշակութային քաղաքականության վրա:

Ուստի, հայկական կինոյի միջազգային ներկայացվածությունը պետք է դիտարկել որպես ռազմավարական ուղղություն, որն անհրաժեշտ է ոչ միայն մշակութային, այլև տնտեսական և քաղաքական զարգացումների համար: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է պետական աջակցություն, մասնավոր հատվածի ներգրավում և միջազգային գործընկերությունների ընդլայնում, ինչը կապահովի հայկական կինոյի մրցունակությունը համաշխարհային հարթակներում:

6. Կինոթատրոնների զարգացման և աջակցության ծրագիր

Հայաստանում կինոթատրոնները կառուցվել են 20-րդ դարի սկզբից: Երևանում առաջին կինոցուցադրությունները տեղի են ունեցել 1898 թվականին, իսկ առաջին կինոթատրոնները՝ «Ապոլլոն» և «Իլյուզիոն», բացվել են համապատասխանաբար 1909 և 1910 թվականներին: Խորհրդային տարիներին կինոթատրոնների շինարարությունը շարունակվել է, և 1965 թվականին Հայաստանում գործել է 968 կինոցուցադրության սրահ: Այժմ Հայաստանի ամբողջ տարածքում գործում է 22 էկրան: Հայաստանում կինոթատրոնների զարգացումը, հատկապես մարզերում, հանդիսանում է ազգային կինոմշակույթի պահպանման և հանրահռչակման կարևոր բաղադրիչ: Չնայած Երևանում գործող մի շարք ժամանակակից կինոթատրոնների առկայությանը, մարզերում կինոթատրոնների ցանցի սակավությունը սահմանափակում է կինոմշակույթի հասանելիությունը համայնքներում: Այս ծրագրի նպատակն է ներկայացնել առաջնահերթ քայլեր, որոնք ուղղված են մարզային կինոթատրոնների զարգացմանը, կինոդիտումների հասանելիության ապահովմանը և տեղական կինոարտադրանքի տարածմանը:

Ծրագիրը պետք է ներառվի հիմնադրամի ռազմավարական նպատակների մեջ՝ որպես առաջնահերթություն:

Կինոթատրոնների առկա վիճակը

Ներկայումս Հայաստանում գործող կինոթատրոնների մեծ մասը կենտրոնացված են Երևանում, ներառյալ՝ «Մոսկվա» կինոթատրոնը, «Սինեմա Սթար» ցանցը և «Կինոպարկը»: Խորհրդային ժամանակաշրջանում երկրում գործում էին բազմաթիվ կինոցուցադրության սրահներ, սակայն ժամանակի ընթացքում այդ ցանցը զգալիորեն նվազել է: Տարբեր մարզերում ներկայումս պահպանված մի քանի կինոթատրոնները կարիք ունեն վերազինման և արդիականացման:

Ծրագրի նպատակները.

ա. Ապահովել կինոմշակույթի հասանելիությունը մարզային համայնքներում:

բ. Զարգացնել և վերազինել գործող կինոթատրոնները:

գ. Ստեղծել կինոդիտումների նոր ձևաչափեր, ներառյալ շարժական կինոթատրոնները:

Հիմնական ծարագրային մոտեցումներ

Շարժական կինոթատրոնների համակարգի ստեղծում

Շարժական կինոթատրոնները կարող են դառնալ կինոմշակույթի վերածննդի հիմնական գործիքները՝ միավորելով տեղեկատվական, կրթական և մշակութային բաղադրիչները: Դրանք ոչ միայն կինոդիտման հնարավորություններ են ընձեռում, այլև աջակցում մասնավոր ներդրողների համար շահավետ նախագծերի ստեղծմանը: Այս ծրագիրը պետք է ներառվի հիմնադրամի նպատակներում՝ որպես երկարաժամկետ ռազմավարական քայլ: Շարժական կինոթատրոնները նպաստում են համայնքներում կինոթատրոն գնալու մշակույթի վերածնմանը՝ ապահովելով հետաքրքրություն և մասնակցություն ազգային և միջազգային ֆիլմերի նկատմամբ:

Ֆիլմերի ցուցադրությունները կարող են ուղեկցվել քննարկումներով և տեղեկատվական արշավներով, որոնք կներգրավեն տեղի բնակչությանը՝ վերածելով կինոթատրոնները մշակութային երկխոսության վայրերի:

Շարժական կինոթատրոններում իրականացվող յուրաքանչյուր միջոցառման ընթացքում պետք է հավաքագրել տվյալներ, որոնք կարող են որոշիչ լինել տվյալ տարածքում կինոթատրոն բացելու համար: Չնայած դրան՝ ունեցած տեղեկատվության և միջազգային փորձի համադրմամբ, կարելի է պարզել անհրաժեշտ կինոթատրոնների քանակը:

Հայաստանի մարզերում կարելի է հիմնադրել փոքր կինոթատրոններ (Miniplex Cinema): Մինիպլեքսները մինչև 100 նստատեղ ունեցող կինոթատրոններ են, որոնք նախատեսված են սահմանափակ բնակչություն ունեցող քաղաքների կամ համայնքների համար: Այն առաջարկում է կինոդիտման միաժամանակ մի քանի դահլիճ:

Մեկ մինիպլեքս կինոթատրոնի արժեքը կախված է մի շարք գործոններից, ինչպիսիք են գտնվելու վայրը, դահլիճների քանակը, նստատեղերի թիվը, օգտագործվող տեխնոլոգիաները, ներքին դիզայնը և սարքավորումները: Ստորև ներկայացնում ենք հիմնական բաղադրիչները, որոնք կարող են ազդել ծախսերի վրա:

1. Հիմնական ծախսեր

1.1. Տարածք (վարձակալություն կամ տարածքի ձեռքբերում) – գինը մեծապես կախված է գտնվելու վայրից: Մայրաքաղաքներում կամ կենտրոնական շրջաններում այն շատ ավելի բարձր է:

- Միջինում վարձակալության գինը 200–500 քմ-ի համար կարող է կազմել 8 մլն–40 մլն տարեկան:

1.2. Կառուցում և ներքին հարդարում (կառուցման ծախսեր) – Կինոթատրոնի կառուցում կամ վերակառուցում՝ ներառելով դահլիճների, անցուղիների, և սպասարկման հատվածների ձևավորում:

- Միջին ծախսը՝ 120.000 դրամ – 280.000 դրամ մեկ քառակուսի մետրի համար:

- Ներքին հարդարում և կահավորում – միջինում՝ 20 մլն – 40 մլն (նստատեղեր, գորգեր, դեկորացիա և այլն):

1.3. Սարքավորումներ (պրոյեկտորներ և էկրաններ) – Մեկ դահլիճի համար՝ 12 մլն – 40 մլն (կախված է պրոյեկտորի որակից, 2D/3D հնարավորություններից):

- Ձայնային համակարգ – Dolby Atmos կամ նմանատիպ բարձրակարգ համակարգ՝ $20,000–$50,000 մեկ դահլիճի համար:

- Տոմսերի վաճառքի և կառավարման համակարգեր – 2 մլն - 6 մլն:

1.4. Օժանդակ ենթակառուցվածքներ՝

- Օդորակման համակարգեր – 4 մլն – 10 մլն:

- Լուսավորություն և էներգիայի մատակարարում – 2 մլն – 6 մլն:

- Սրճարան կամ սպասարկման հատվածներ – 4 մլն – 12 մլն:

2. Շահագործման ծախսեր (անձնակազմի աշխատավարձեր) – 5–10 աշխատակից՝ տարեկան 12 մլն – 24 մլն:

- Սարքավորումների սպասարկում և թարմացում – 4 մլն – 8 մլն տարեկան:

- Պահպանման ծախսեր (էլեկտրաէներգիա, ջուր, ինտերնետ) – 2 մլն – 4 մլն տարեկան:

Մինիպլեքս կինոթատրոնների հիմնադրումը, կախված դահլիճների և նստատեղերի քանակից, կարող է արժենալ մոտ 68 մլն – 230,000 մլն ՀՀ դրամ: Հավելյալ եկամուտներ կարելի է ստանալ տոմսերի վաճառքից, գովազդներից, սննդի վաճառքից, ինչպես նաև հատուկ միջոցառումների կազմակերպումից:

Հայաստանի պայմաններում, մարզերի բնակչության և պահանջարկի հիման վրա, յուրաքանչյուր կինոթատրոնում պետք է լինի 2–5 դահլիճ՝ տարբեր չափերի և ֆունկցիոնալությամբ: Մեծ քաղաքներում (Երևան, Գյումրի, Վանաձոր) նպատակահարմար է ունենալ 5–8 դահլիճ, մինչդեռ փոքր համայնքներում բավարար կլինեն 2–3 դահլիճ:

Նախնական ֆինանսական գնահատում

Կազմակերպչական բաղադրիչներ	Գնահատական (ՀՀ դրամ)
Տարածքի վարձակալություն	8 մլն – 40 մլն
Կառուցում և հարդարում	24 մլն – 80 մլն
Սարքավորումներ	28 մլն – 80 մլն
Օժանդակ ենթակառուցվածքներ	8 մլն – 30 մլն
Ընդհանուր	68 մլն – 230 մլն

Առաջարկվող դահլիճների քանակը ըստ մարզերի

Մարզ	բնակչություն	առաջարկվող դահլիճներ
Երևան	~1,000,000	6–8
Շիրակ (Գյումրի)	~215,000	3–4
Լոռի (Վանաձոր)	~203,000	3
Կոտայք (Հրազդան)	~254,000	3–4
Գեղարքունիք	~215,000	3
Սյունիք	~120,000	2
Արարատ	~260,000	3–4
Արմավիր	~265,000	3–4
Տավուշ	~120,000	2
Վայոց Ձոր	~50,000	1–2
Արագածոտն	~125,000	2

Տոմսերի հնարավոր գների հաշվարկը բնակչության միջին եկամուտների և ծախսելու կարողության գնահատման հիման վրա որոշվում են տոմսերի մրցակցային գները:

Ֆիլմերի ցուցադրման պարբերականությունը հաշվարկվում է, թե կինոթատրոնը քանի օր կարող է գործել ամսվա ընթացքում՝ ապահովելով

ծախսերի ծածկումը: Որոշվում է, թե ինչ ձևաչափով կինոթատրոն (կայուն կամ շարժական) կարող է լինել առավել շահավետ՝ ներդրումային ռիսկերը նվազեցնելու համար:

Մասնավոր ներդրողների ներգրավում

Շարժական կինոթատրոնների գործարկման արդյունքում հավաքագրված տվյալների հիման վրա կարելի է մշակել բիզնես պլաններ, որոնք կներկայացվեն մասնավոր հատվածին՝ ներդրումների խթանման նպատակով:

Շարժական կինոթատրոնները կօգնեն վերականգնել կինոթատրոն գնալու սովորությունը, ինչը կարևոր հիմք կդառնա կայուն կինոթատրոնների ստեղծման համար: Այս տեղեկատվական և մշակութային նախաձեռնությունը պետք է լինի հիմնադրամի երկարաժամկետ նպատակների առանցքային բաղադրիչներից մեկը՝ աջակցելով ինչպես ազգային կինոմշակույթի տարածմանը, այնպես էլ համայնքների սոցիալ-մշակութային զարգացմանը:

Կինոարվեստի զարգացման համար կարևոր է ոչ միայն արտադրությունը, այլև դրա տարածումը: Հայաստանի մարզերում կինոթատրոնների սակավությունը խոչընդոտում է կինեմատոգրաֆիայի տարածմանը: Հարկավոր է ներդրումներ կատարել նոր կինոթատրոնների կառուցման և գործողների արդիականացման համար՝ տեղական և միջազգային ֆիլմերը մարզերի բնակչությանը հասանելի դարձնելու նպատակով:

7. Վիճակագրական վերլուծությունների համար անհրաժեշտ տվյալների միասնական էլեկտրոնային շտեմարանի ստեղծում

Ծրագրային այս դրույթի հիմնական նպատակն է ոլորտի զարգացման ռազմավարական պլանավորման, կառուցվածքային խնդիրների բացահայտմանն ու լուծմանն ուղղված արդյունավետ քայլերի մշակումը: Տվյալների շտեմարանի գործարկման անհրաժեշտությունը և տվյալների վերլուծության կարևորությունը կինոարտադրության ոլորտի արդի հիմնախնդիրներից է: Այն վերաբերվում է ոչ միայն ժամանակակից կինոարտադրությանը, այլև՝ կինոժառանգությանը:

Կինոարտադրության ոլորտում տեղեկատվության հավաքագրման և վերլուծության հստակ մեխանիզմի բացակայությունը խոչընդոտում է ոլորտի իրական վիճակի գնահատմանը, որովհետև չկան հստակ տվյալներ արտադրության ծավալների, տարածման արդյունքների, կինոթատրոնների գործունեության կամ հանրային կարծիքի վերաբերյալ:

Վիճակագրական տվյալների միասնական շտեմարանի ստեղծումը անհրաժեշտ է կինոարտադրության վերաբերյալ ամբողջական տեղեկատվության մշակման համար, ինչը թույլ կտա կայացնել թիրախային և չափելի որոշումներ: Տեղեկատվական շտեմարանի ստեղծման համար կան բավարար նախադրյալներ, ինչպես՝ 2021 թվականի հունիսի 30-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի[1] և այդ օրենքի կիրառումն ապահովելու նպատակով կառավարության ընդունած որոշումները, որոնք բավարար հիմք են ստեղծում համակարգված տվյալների հավաքագրման համար:

Այս տեսանկյունից ուշագրավ են կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված համար 2127-Ն[2] որոշմամբ՝ կինոռեեստր վարելու և ազգային ֆիլմի փաստաթղթերը մշտական պահպանության հանձնելու ընթացակարգերն ու պայմանները, 2024 թվականի հունվարի 18-ին ընդունված համար 92-Ն[3] որոշմամբ սահմանված վարձույթի վկայականի տրամադրման, ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման նշումների կարգերը, ինչպես նաև՝ ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի համար 1567-Ն[4] որոշման ընդունված ազգային ֆիլմերի հեռարձակման և կինոթատրոնում ցուցադրման, ինչեպ նաև դրանց ընթացքում գովազդի տեղադրմամբ ստացված եկամուտների մասին տեղեկատվությունները ֆիլմ ցուցադրողների կողմից ազգային մարմին ներկայացնելու կարգը:

Տվյալների շտեմարանի ստեղծումն առանցքային նշանակություն ունի ոչ միայն ազգային կինոարտադրության խթանման և զարգացման համար, այլ կարևոր է նաև միջազգային համագործակցության ընդլայնման տեսանկյունից: Հաշվի առնելով, որ «Հայաստանի կինոյի հիմնադրամը» հանդիսանում է Եվրոպական տեսալսողական դիտարանի անդամ, շտեմարանի գործարկումը կարող է էապես բարձրացնել համագործակցության արդյունավետությունը՝ աջակցելով միջազգային պարտավորությունների կատարմանը և նոր գործընկերային հարաբերությունների հաստատմանը: Միևնույն ժամանակ, տվյալների շտեմարանի ձևավորումը վերաբերում է «Ստեղծագործ Եվրոպա»[5]

---

[1] ՀՀ օրենքը կինոմատոգրաֆիայի մասին ընդունվել է 2021, Հուլիսի 15-ին:

[2] Կինոռեեստր վարելու և ազգային ֆիլմի փաստաթղթերը մշտական պահպանության հանձնելու ընթացակարգերն ու պայմանները:

[3] Վարձույթի վկայականի տրամադրման, ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման նշումների կարգերը

[4] Ազգային ֆիլմերի հեռարձակման և կինոթատրոնում ցուցադրման, ինչեպ նաև դրանց ընթացքում գովազդի տեղադրմամբ ստացված եկամուտների մասին տեղեկատվությունները ֆիլմ ցուցադրողների կողմից ազգային մարմին ներկայացնելու կարգը

[5] «Ստեղծագործ Եվրոպա»-ն Եվրոպական միության ծրագրերից է, որն ուղղված է ստեղծագործական, մշակութային և տեսալսողական ոլորտների աջակցությանը: Ստեղծագործ Եվրոպա 2021-2027 ծրագրի բյուջեն 2,44 միլիարդ եվրո է և

ծրագրի մեդիա բաղադրիչի պահանջներին, որը նպատակ ունի խթանել եվրոպական տեսաձայնային ոլորտով զբաղվողների համախմբումը:

Հայաստանի Հանրապետությունը դեռևս պաշտոնապես չի միացել «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի «մեդիա» ենթածրագրին, սակայն՝ որպես կարևոր առաջնահերթություն, այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկվում են: Վերը իրավական ակտերը հնարավորություն են տալիս ստեղծել կինոարտադրության ոլորտի տեղեկատվության հավաքագրման և վերլուծության համապարփակ համակարգ, որն ամուր հող կհանդիսանա ռազմավարական որոշումների կայացման համար:

Այսպիսով՝ Հայաստանի կինոյի հիմնադրամի եռամյա ծրագրում ներառված վիճակագրական շտեմարանը կազմված կլինի տեխնիկական, կազմակերպչական, իրավական և ֆինանսական հետևյալ չափորոշիչներից:

ա. *Տեխնիկական պահանջներ*

Շտեմարանի արդյունավետ աշխատանքի համար պահանջվում է հուսալի սերվեր կամ ամպային հոստինգ, ինչը կերաշխավորի տվյալների անվտանգ և անխափան պահպանումը: Տվյալների կառավարման համակարգի ընտրությունը նույնպես կարևոր է. համակարգերը, ինչպես օրինակ՝ MySQL, PostgreSQL կամ MongoDB, պետք է համապատասխանեն շտեմարանում ներառվող տվյալների չափանիշներին: Ծրագրային ապահովումը կարևոր գործոն է. անհրաժեշտ են այնպիսի ծրագրեր, որոնք թույլ կտան համակարգել ոչ միայն տվյալների բազան, այլ նաև գործարկել ինտերֆեյսներ և API-ներ՝ օգտատերերին հնարավորություն տալով հեշտությամբ մուտք գործել համապատասխան աշխատանքային էջեր: Անվտանգության միջոցառումների կիրառումը պարտադիր պայման է, ներառյալ տվյալների գաղտնիության պաշտպանությունը:

բ. *Կազմակերպչական քայլեր*

Հայաստանի կինոյի հիմնադրամի առաջիկա քայլերից մեկը պետք է լինի շտեմարանի նպատակներն ու պահանջները ձևակերպելը: Ոլորտի մասին հավաքագրվող տեղեկատվությունը պետք է ներառի ֆիլմարտադրության, վարձույթի վկայականների, դիտումների հաճախականության և ֆինանսական ցուցանիշների վերաբերող տվյալներ: Սա պահանջում է փորձառու մասնագետների թիմի ձևավորում, որոնց թվում պետք է ընդգրկվեն ծրագրավորողներ և թվային անվտանգության մասնագետներ: Շտեմարանի գործունեությունը պետք է համապատասխանի «Կինեմատոգրաֆիայի մասին»

կառավարվում է Եվրոպական Հանձնաժողովի կողմից Կրթության և մշակույթի գործադիր գործակալության միջոցով:

օրենքի դրույթներին և տվյալների պաշտպանության միջազգային ստանդարտներին, ինչպիսիք են GDPR-ը:

Այս փուլում Հիմնադրամը պետք է վերանայի նախկինում կնքած լիցենզիոն պայմանագրերը, համապատասխանեցնելով դրանք ՀՀ միջազգային պարտավորություններին և ՀՀ օրենսդրությանը: Հարկ եղած դեպքում վեր հանելով իրավական դաշտում առաջացող խնդիրները և պետական լիազոր մարմնի աջակցությամբ հանդես գա օրենսդրական փոփոխությունների առաջարկներով: Հեղինակային իրավունքների և տվյալների հասանելիության հետ կապված պայմանագրերի մշակումը կերաշխավորի, որ շտեմարանը գործի իրավական դաշտում, ինչը կստեղծի հեղինակների մոտ վստահության մթնոլորտ:

8. Հիմնադրամի արտաբյուջետային ֆինանսավորումը

Հայաստանի Կինոյի Հիմնադրամի տարեկան բյուջեի արդյունավետ ծախսումը հիմնված է ռազմավարական առաջնահերթությունների, ոլորտային կարիքների և ֆինանսական ռեսուրսների օպտիմալ բաշխման վրա: Այս տրամաբանությամբ ապահովվում է հիմնադրամի գործունեության կայունությունն ու ծրագրերի իրագործման բարձր արդյունավետությունը:

Այս փուլը սակայն պահանջում է մանրակրկիտ ուսումնասիրություն և վերլուծություն, որի համար անհրաժեշտ է առնվազն վեց ամիս, որպեսզի գնահատվեն տեխնիկական հնարավորությունները, անհրաժեշտ ռեսուրսները և առկա ծրագրերի ընթացիկ վիճակը: Օրինակ՝ 2024 թվականին ՀԲԸՄ-ի կողմից տրամադրված դրամաշնորհային միջոցներով ձեռք բերված նախասքանավորման սարքն առաջիկայում թույլ կտա ավելի ճշգրիտ պլանավորել և իրականացնել պետության կողմից ֆինանսավորվող թվայնացվող և վերականգնվող նյութերի ծրագրային բյուջետավորումը: Այս սարքի կիրառումը նաև կնվազեցնի թերությունների հավանականությունը և կապահովի ծրագրերի արդյունավետ իրականացումը:

Հայաստանի Կինոյի Հիմնադրամի բյուջետային և արտաբյուջետային ֆինանսավորման համակարգը պետք է կառուցված լինի արդյունավետ և թափանցիկ սկզբունքների վրա՝ ներառելով թե՛ պետական միջոցներ, թե՛ արտասահմանյան և տեղական ներդրողներից ստացվող աջակցությունը:

Հիմնադրամի արտաբյուջեն հիմնականում սնվում է կինոժառանգության ֆիլմերի լիցենզիոն պայմանագրերից ստացվող եկամուտներով: Այս միջոցները հիմնականում ուղղվում են միջազգային կինոշուկաներում Հայաստանի ներկայությունն ըստ արժանվույն կազմակերպելու համար: Կինոշուկաների բյուջեի մի մասը ձևավորվում է պետական միջոցներից, սակայն զգալի մասը հիմնադրամի արտաբյուջեի վրա է ընկնում:

Ակնհայտ է, որ ֆինանսական այս մոդելը բավարար չէ հիմնադրամի՝ կինոարդյունաբերության զարգացման, կինոարտադրության նոր ծրագրերի և կրթական նախաձեռնությունների իրականացման կարիքների համար: Հիմնադրամին անհրաժեշտ են ֆինանսական հավելյալ ուղիներ:

8.1 Հայաստանի Կինոյի հիմնադրամի այլընտրանքային ֆինանսավորման ուղիները

Հայաստանի Կինոյի Հիմնադրամի զարգացման և ֆինանսական կայունության ապահովումը պահանջում է նորարարական մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան գրավել միջազգային ռեսուրսներ, ընդլայնել ազգային և միջազգային համագործակցության շրջանակները և ապահովել հայկական կինոյի մրցունակությունը գլոբալ շուկայում: Այս ուղղությամբ առանձնանում են մի քանի ռազմավարական նախաձեռնություններ:

1. ԱՄՆ-ում գրասենյակի բացում և 501(c)(3) կարգավիճակի գրանցում

Հայաստանի Կինոյի Հիմնադրամի միջազգային ճանաչումն ամրապնդելու և ԱՄՆ-ից դրամաշնորհային և մասնավոր նվիրատվությունների նոր հոսքեր ապահովելու համար նպատակահարմար է հիմնադրամի գրասենյակի բացումը ԱՄՆ-ում, որը կգրանցվի **501(c)(3)** կարգավիճակով:

501(c)(3) կարգավիճակի հնարավորությունները – Հարկային արտոնություններ նվիրատվությունների համար. ԱՄՆ-ում գործող ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք նվիրատվություններ են կատարում 501(c)(3) կարգավիճակ ունեցող կազմակերպություններին, ստանում են հարկային արտոնություններ: Սա կարևոր խթան է ամերիկահայ բարերարների համար՝ աջակցելու Հայաստանի Կինոյի Հիմնադրամին:

Դրամաշնորհների հասանելիություն. Կոդեքսը թույլ է տալիս դիմել ԱՄՆ-ում գործող մեծ հիմնադրամներին և այլ միջազգային կառույցներ: Համագործակցության ամրապնդում. Ամերիկյան գրասենյակը կծառայի որպես կապող օղակ՝ հայկական և միջազգային կինոարտադրողների, դիստրիբյուտորների, և փառատոների միջև:

Գործնական քայլեր – Գրանցման գործընթաց. Նախքան գրասենյակի ստեղծումը, մշակել մանրամասն ռազմավարություն, ներառյալ հիմնադրամի նպատակներն ու առաջնահերթությունները՝ ամերիկյան շուկայի համար:

Դրամաշնորհային ծրագրեր. Հիմնադրամի գրասենյակը կկենտրոնանա կրթական, թվայնացման և ռեստավրացիայի ծրագրերի իրականացման վրա՝ համաշխարհային ներդրողների աջակցությամբ:

Ֆիլմերի հանրահռչակման արշավներ. Գրասենյակը կկազմակերպի հայկական ֆիլմերի ցուցադրություններ, միջազգային փառատոներ և կդառնա Հայաստանի կինոյի դեսպան ԱՄՆ-ում:

2. «Հայաստանի կինոյի դեսպաններ»

Հայաստանի կինոյի միջազգային ճանաչումն ու ֆինանսական կայունությունը կարող են մեծապես զարգանալ «Հայաստանի կինոյի դեսպաններ»-ի միջոցով: Այս նախաձեռնությունը նպատակ ունի ներգրավել տարբեր երկրներում գտնվող հայ կինոգործիչներին, որոնք կդառնան հայկական կինոարվեստի ներկայացուցիչները այն երկրում որտեղ ապրում են:

Դեսպանների գործառույթները

1. Հանրահռչակում. Դեսպանները կկազմակերպեն հայկական ֆիլմերի ցուցադրություններ, համատեղ նախագծեր և փառատոներ իրենց երկրներում:
2. Ֆինանսական աջակցություն. Դեսպանները կփորձեն ներգրավել ներդրումներ մասնավոր և պետական աղբյուրներից:
3. Միջազգային կապերի ամրապնդում. Ներկայացուցչական գրասենյակները հնարավորություն կտան ձևավորել համագործակցություն միջազգային կինոարտադրողների և դիստրիբյուտորների հետ:

Ինստիտուտի կառուցվածքը

- Գլխավոր գրասենյակ Հայաստանում. Դեսպանների աշխատանքը համակարգող կենտրոն:
- Ներկայացուցչություններ. Ներկայացուցչական գրասենյակներ Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ռուսաստանում և Հնդկաստանում՝ կենտրոնանալով այդ երկրների շուկաների յուրահատկությունների վրա:

8.2 Եզրակացություն

Այս նորարարական մոտեցումները, ներառյալ ԱՄՆ-ում գրասենյակի բացումը, դեսպանների ինստիտուտի ստեղծումը, և Հայաստանի Կինեմատոգրաֆիայի օրենքի հնարավորությունների ամբողջական կիրառումը, կստեղծեն նոր ֆինանսական մոդել, որը կաջակցի հայկական կինոյի երկարաժամկետ զարգացմանը:

Հայաստանի Կինոյի Հիմնադրամը, օգտագործելով այս մեխանիզմները, կարող է դառնալ միջազգային կինոշուկայի լիիրավ դերակատար՝ ապահովելով

հայկական մշակույթի ճանաչելիությունը և ազգային կինոարտադրության կայուն զարգացումը:

Հայաստանի Կինոյի Հիմնադրամի բյուջետային և արտաբյուջետային ֆինանսավորման համակարգը պետք է կառուցված լինի արդյունավետ և թափանցիկ սկզբունքների վրա՝ ներառելով թե՛ պետական միջոցներ, թե՛ արտասահմանյան և տեղական ներդրողներից ստացվող աջակցությունը:

Հիմնադրամի արտաբյուջեն հիմնականում սնվում է կինոժառանգության ֆիլմերի լիցենզիոն պայմանագրերից ստացվող եկամուտներով: Այս միջոցները հիմնականում ուղղվում են Միջազգային կինոշուկաներում Հայաստանի ներկայությունը լավագույնս կազմակերպելու վրա:

Ակնհայտ է, որ ֆինանսական այս մոդելը բավարար չէ հիմնադրամի՝ կինոարդյունաբերության զարգացման, կինոարտադրության նոր ծրագրերի և կինոկրթական նախաձեռնությունների իրականացման կարիքների համար:

Հիմնադրամին անհրաժեշտ է ֆինանսական նոր մոդել, որը կներառի՝ կարիքների գնահատում և նպատակային ծրագրեր: Հայաստանի Կինոյի Հիմնադրամը պետք է իրականացնի ոլորտի կարիքների համապարփակ գնահատում և այս կարիքների լրացման ուղղությամբ մշակի նոր ծրագրեր, ներառյալ՝

ա. Կինոժառանգության թվայնացում:
բ. Կինոյի միջազգային շուկայում երկրի ճանաչելիության բարձրացում:
գ. Նորարարական կինոկրթական ծրագրերի իրականացում:

Ներկայիս բյուջետային սահմանափակումները պահանջում են պետական ֆինանսավորման խելամիտ ավելացում, որը համադրվի արտաբյուջետային միջոցների հետ:

Այսպիսով Հայաստանի կինոոլորտի բարելավման, կինոժառանգության պահպանման և միջազգային հարթակներում ազգային ֆիլմի հանրահռչակման համար հիմնադրամը պետք է ունենա վերոնշյալ բոլոր ուղղություններով կազմված համապարփակ ծրագրեր, իրենց հիմնավորումներով, ժամանակացույցերով և հաշվարկված բյուջեյով: Առաջիկա երեք տարիներին հիմնադրամը պետք է իր ներուժը օգտագործի հավաքագրված տեղեկատվության հիման վրա ստեղծված մրցունակ ծրագրերի իրականացմանը: Այս նախաձեռնությունների կյանքի կոչումը կապահովեն տեղական կինոարդյունաբերության զարգացումը, կուժեղացնեն ազգային կինոյի դիրքերը և կնպաստեն երկրի տնտեսական ու մշակութային առաջընթացին: